

մանց տուաւ, ու Յայտնութեան գրքին մեկնութիւն մը շինեց :

Ինալուծութիւն ալ սորվեցաւ, բայց դժբաղդ գիպուածով մը բոլոր աշխատանքը փճացաւ. վասն զի իր շնիր գիշեր մը անոր սենեակը մտնելով, կանթեղը գրասեղանին վրայ ձգեց ու բոլոր գրուածքները այրեց : Խեղճ Վեւտոնը այնչափ ցաւեցաւ աս բանիս վրայ, որ քիչ մնաց խելքը պիտի թուցընէր :

1) Երջապէս 1727ին, մարտի 20ին ծանր հիւանդութեամբ մեռաւ ութսունուհինգ տարուան Վրենաշէկերտները շատ լացին իր վրայ. ընտանիքն ալ 1) Եսթմինսթրի եկեղեցւոյն մէջ փառաւոր գերեզման մը շինեցին վրան :

Վեւտոնին մեռնելէն 'ի վեր 117 տարի է, բայց իր անունը Վալիլէոսին ու Վոպերնիկոսին անուններուն պէս՝ երթալով կրպայծառնայ. աւան կրթեալ զգեցողիքը կրպատուեն իբրեւ նոր փիլիսոփայութեան սկզբունքներուն յառաջացուցիչ, և մարդկայ որ ասոր անունն ու վարքը լսած ըլլայ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ինքնագրապատմութիւն :

Յուսանք որ մեր ընթերցողներէն գէթ ոմանք ազատեցան ուրուականներու վախէն, իմանալով թէ մեռելոց հոգին փուճ տեղը գիշերները չերենար ու չկրնար երենալ. և թէ որչափ պատմութիւններ որ կը պատմուին աս բանիս վրայ՝ կամ շինծու են, և կամ ուրիշ կերպով հասկընալու է զանոնք : Հիմա խօսինք «սպանայ կամ գիւ երենալուն վրայ, որ տաճկերէն ձի, Գէլ, Գէրի կ'ըսուին :

Ենք ըսեր թէ սատանայ ըսուած բանը չկայ. վասն զի սուրբ գիրքը կը ցուցնէ և հաւատքը կը սորվեցընէ

մեզի, թէ ինչպէս որ բարի հրեշտակներ կան՝ որ զմեզ մեղքէ կը զգուշացընեն ու փորձանքներէ կը պահեն, այսպէս ալ չար հրեշտակներ կամ սատանաներ կան որ կը ջանան զմեզ մեղքի մէջ ձգել, ու թէ հոգւոյ և թէ մարմնոյ վնասներ ընել : Եր խօսքը հիմա ան է թէ բոլորովին սուտ ու շինծու առասպել է անիկայ որ կ'ըսեն թէ աս կամ ան Գանը Դէլ «սպանայ կայ, գիշեր կայ որ Խալէի կամ Գարաֆոնազի կը պտըտի, ջրերու քով կամ պարտեզներու մէջ Դիւի աղբիւրը կամ յաւերժ Կարսանի՝ կը քալեն, և ասոնց նման աւելորդ ապաշտական խօսքերը : Ենք բոլորն ալ կուսպաշտութենէ մնացած կարծիքներ են, որ քրիստոնէի մը հաւար մեծ մեղք է ասոնց հաւատալը : Ամարիտ քրիստոնեան սատանայ չը տեսներ, վասն զի տեսնելու ալ ըլլայ նէ՝ չվախնար. իսկ սուտ քրիստոնեան սատանաներէ վախնալով, և կամ ուրիշներն որ սատանայական երեւոյթներ կը պատմեն՝ անոնց հաւատալով, յայտնի կ'ընէ թէ ինքը իր քրիստոնէական կատարելութիւն և պարտքերը չճանչնար, և չգիտեր թէ ինչով կը տարբերին անհաւատներէն ու կուսպաշտներէն :

Տուն մը որչափ ալ հին ըլլայ, որչափ ալ աւերակ ըլլայ, սատանան հոն բան չունի. և սակայն աւելորդ ապաշտ ժողովուրդներու մէջ շատ տրեւեր կը տեսնես որ ասոնց մէջ սատանայ կայ ըսելով իրարու կը ցուցընեն : Տանտիրոջը հարցընես նէ՝ ես ուրիշ տուն ունիմ, անոր համար հինը երեսի վրայ ձգեր եմ կ'ըսէ. ուստի կամ ան է որ տանը անունը աւրուած ըլլալով վարձուոր չգտներ, կամ ան է որ ինքը վարձուոր չգտնելուն համար՝ ուրիշները մէջը սատանայ կայ ըսեր ու անունը աւրեր են : Սատանան շատ շատ՝ մարդկանց մէջ կը մտնէ կը բնակի, որ զանոնք խաբէ ու մոլորցընէ. հին տներուն մէջ՝ աւերակներուն մէջ

ինչ բան ունի : Եւ աւելորդապաշտութեան դէմ շատ պատմութիւններ կը պատմուին . բայց մենք մէկ երկու հատը բաւական համարինք օրինակի համար :

Ա . Եւսեփոս Գլխաւորապաշտ տան մը մէջ մեծ շփոթութիւն կ'իյնայ քանի մը շաբաթ աս պատճառաւ , որ ամէն իրիկուն կէս գիշերուան մօտ սաստիկ որոտմունքի պէս ոտնաձայներ դըղըրդումներ կը լսուին , մանաւանդ մէկ սենեակը՝ որ մէկալներէն բարձր ու պարապ է եղեր : Եւ յետոյ տեսնուի մտքերնին դնելով թէ անշուշտ սատանայ կայ տներնին , տակն ու վրայ եղած՝ կը պատմեն աս փորձանքը իրենց քահանային : Իմաստուն քահանան շատ կ'աշխատի անոնց մտքէն հանելու աս վախը՝ երեւակայութիւն է ըսելով . բայց երբոր կը տեսնէ թէ անոնք ամէնքը մէկ բերան կը հաստատեն , հոս մէկ բան մը պիտի ըլլայ ըսելով՝ կտրըճութիւնը ձեռք կ'առնէ . աս գիշեր առջի իրիկունէն ես կուգամ ան սենեակը կը մտնեմ ու կը պառկիմ , բայց ձեզմէ զատ մարդ չգիտնայ , կ'ըսէ : Հետը հաստ գաւազան մը առած կը մտնէ կը պառկի , թէպէտ և քունը չտանիր : Եւ մըն ալ տեսնէ որ իրաւցընէ կէս գիշերուան մօտ սոսկալի դըղըրդումներով սանդուխներէն վեր ելլելու ոտնաձայն մը կայ . կը ցատքէ վեր կ'ելլէ , ու ձեռքի գաւազանովը մէկ երկու անգամ ան ներս մտնողին զարկածին պէս , աներկոյթ սատանան նոյնպիսի դըղըրդումով սանդուխներէն վար կ'իջնայ կը կորսուի : Իրտը կը հանգչի քահանային , կուգայ տեղը կը պառկի , հանգիստ քուն մը կը քաշէ : Եւ առտը կ'ելլեն կը տեսնեն ամէնքն որ տան ծառաներէն մէկուն գլուխը կապած կապկըպած է . ինչ է պատճառն ըսելով կը հարցընեն . — Եւ գիշեր սա-

տանաներէն ծեծ կերայ ըսելուն չմընար , խաղքութիւնը դուրս կ'ելլէ . կ'իմանան որ աս անզգամն է եղեր ան տանը սատանան , որ իրեն սատանայական զուարճութիւն մը ըրեր է աս կերպով տունը տակն ու վրայ ընելը . մէկէն կը վազնտեն զինքը , և քահանային շնորհակալ կ'ըլլան որ ան վախէն այսպիսի կտրըճութեամբ ազատեց զիրենք :

Բ . Գերմանիայի գեղերէն մէկուն եկեղեցին օր մը քանի մը գողեր կը մտնեն պատուհանէն , շատ մը զարդարանքներ ու զգեստներ իրարու վրէ կը դիզեն , բայց առանց բան մը առնելու կը ձգեն կ'երթան : Եւ առտոնց լուսարարը եկեղեցին բանալուն պէս աս որ կը տեսնէ , ապաւ իր մնայ . քահանային իմաց կուտայ , ան ալ դատաւորին : Բանի մը ամէն մէկ քանի գողեր ձեռք կ'իյնան . քննութեան ատեն իրենց ըրած այլ և ոչ գողութիւնները խոստովանելէն ետքը , երբոր դատաւորը կը ստիպէ որ զուրցեն թէ արդեօք եկեղեցիէն ալ բան գողցեր են , գողերը կը խոստովանին թէ իրաւ ուղեցինք գողնալ , բայց չկրցանք . վասն զի երկայն եղջիւրներով ու կրակոտ աչուրներով սատանայ մը ելաւ առջևնիս , ու այն պէս վախցուց զմեզ որ ամէն բան ձգեցինք փախանք , երդում ալ ըրինք որ մէյմըն ալ եկեղեցիներէն բան չգողնանք : Եւ բանս երբոր լսեց գեղի քահանան , մէկէն հասկըցաւ թէ սատանայ ըսածնին իր եղնին՝ է եղեր , որ ընտանեցած ըլլալով ժամատան քովերը կը պտըտի եղեր , և ան գիշերը զիպուածով եկեղեցւոյն մէջ մնացեր է :

1 Կէի :